ՀԱՅ-ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԿԱՊԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ

Սեպտեմբերի 6-ից մինչև 9-ը Երևանում տեղի ունեցավ հայ-ուկրաինական պատմական կապերին նվիրված գիտական նստաշրջան ի պատիվ Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակի։ Գիտական նստաշրջանը կազմակերպել էին Հայկական ՍՍՀ և Ուկրաինական ՍՍՀ գիտությունների ակադեմիաների պատմության ինստիտուտները. Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարան և Լվովի Ի. Ֆրանկոյի անվան համալսարանի հասարակական գիտությունների ինստիտուտը։ Նստաշրջանի աշխատանքներին մասնակցելու համար Կիևից, Լվովից, Մոսկվայից և այլ քաղաքներից Երևան էին ժամանել մեծ թվով պատմաբաններ։

Հակիրճ ելույթով նստաշրջանը բացեց Հայկ. ՍՍՀ ԳԱ պրեզիդենտ Վ. Համբարձումյանը։

Ուկրաինայի և Հայաստանի գիտնականները, ասաց նա, գիտահետազոտական համատեղ աշխատանքի լավագույն ավանդույթներ ունեն։ Դեռևս 1954 թ., Ռուսաստանի հետ Ուկրաինայի վերամիավորման 300-ամյակի տոնակատարության օրերին, Հայաստանի գիտությունների ակադեմիան լույս ընծայեց «Մեծ բարեկամություն» վերնագրով ժողովածուն, որտեղ զետեղված են ուկրաինացի և հայ գիտնականների աշխատությունները՝ նվիրված երկու ժողովուրդների պատմական կապերին։ Հետագա տարիներին Երևանում, Կիևում և Լվովում անցկացվեցին գիտական նստաշրջաններ նույն հարցի վերաբերյալ։

Մենք երախտագիտությամբ ենք նշում, շարունակեց Վ. Համբարձումյանը, այն ուշադրությունը, որ ուկրաինացի գիտնականները նվիրում են ուկրաինա-հայկական պատմական և ներկայումս գոյություն ունեցող կապերին։ Մենք խորին շնորհակալությամբ ու երախտագիտությամբ ենք տոգորված ուկրաինական ժողովրդի նկատմամբ, որի հյուրընկալության, մարդասիրության և բարյացակամության շնորհիվ տասնյակ հազարավոր հայեր ապաստան գտան, ապրելու ու աշխատելու հնարավորություն ստացան։

Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի և Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի անունից գիտաշրջանի մասնակիցներին ողջունեց ՀԿԿ Կենտկոմի քարտուղար Ռ. Խաչատրյանը։

— Ուկրաինական և հայ ժողովուրդները իրենց սեփական փորձով են գիտակցել Հոկտեմբերյան հեղափոխության դերն ու նշանակությունը, հեղափոխություն, որը նրանց բերեց սոցիալական ու ազգային ազատություն, լայն ասպարեզ տվեց ստեղծագործական ուժերին, իսկական վերածնունդ ապահովեց նրանց համար։

Այնուհետև ընկ. Ռ. Խաչատրյանը կանգ առավ մեր պատմաբանների առջև ՍՄԿԿ XXIII համագումարի դրած մեծ խնդիրների վրա, նստաշրջանի մասնակիցներին ցանկացավ հաջող և արդյունավետ աշխատանք։

Առաջին պլենար նիստում լսվեց չորս զեկուցում։ Ուկրաինական ՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի դիրեկտոր, պատմական գիտությունների դոկտոր Կ. Կ. Դուբինայի և պատմական գիտությունների թեկնածու Բ. Պ. Կովալևսկու համատեղ զեկուցումը նվիրված էր Հոկտեմբերյան հեղափոխության վճռական նշանակությանը ուկրաինական ժողովրդի պատմական ճակատագրում։ Հեղինակները ցույց տվեցին, որ հեղափոխությունը ուկրաինական ժողովրդին տվեց ոչ միայն սոցիալական ազատություն, այլև ազգային պետականություն և ինքնուրույնություն։ Զեկուցման մեջ փաստեր բերվեցին այն մասին, որ Ուկրաինայում սովետական կարգերի հաստատման համար մղված պայքարում նշանակալի ավանդ են մուծել նաև հայ ժողովրդի զավակները։ Քաղաքացիական պատերազմի հերոս Գ. Ոսկանյանի գլխավորությամբ 12-րդ բանակը 1920 թ. Ուկրաինայի մայրաքաղաք Կիևը ազատագրեց սպիտակ լեհերից։ Օտարերկրյա ինտերվենցիայի դեմ մղված պայքարում ակտիվ մասնակցություն են հանդես բերել նաև բրիգադի հրամանատար Գ. Խախանյանը, 3-րդ հեծյալ կորպուսի հրամանատար Հ. Բժշկյանը (Գայ)։ Ուկրաինայում կուսակցական-քաղաքական և ռազմական մեծ աշխատանք է կատարել Ալ. Մյասնիկյանը։ Նույն ձևով էլ Ուկրաինայի զավակները մարտնչել են Հայաստանում սովետական կարգեր հաստատելու համար։

Դրանցից լայնորեն հայտնի են 11-րդ բանակի հրամանատարներ Մ. Ի. Վասիլենկոյի, Ի. Ֆ. Ֆեդկոյի, դիվիզիայի հրամանատար Պ. Կուռիչկոյի, դնդերի հրամանատարներ Ի. Ռ. Ապանասենկոյի, Գ. Գրեչուխայի և ուրիշ շատերի անունները։

Զեկուցման հեղինակները բազմաթիվ փաստերի միջոցով ցույց տվեցին Ուկրաինայի տնտեսության, մշակույթի և գիտության սննախընթաց վերելքը 50 տարում։

Հայկ. ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ս. Տ. Երեմյանի զեկուցման թեման էր «Եվրոպական Սարմատիան ըստ Պտղոմեոսի և VII դարի հայկական աշխարհագրության»։ Ուկրաինայի և նրա հարևան երկրների աշխարհագրական նկարագրությունը տրված է Պտղոմեոսի «Աշխարհագրական ձեռնարկի» «Եվրոպական Սարմատիա» գլխում։ Գիտնականը ցույց տվեց, որ նշված երկրամասը նկարագրված է նաև «Աշխարհացույցում»։

— Պատմական գիտությունների դոկտոր Ֆ. Պ. Շևչենկոն (Կիև) զեկուցեց XVII—XVIII դարերում ձախափնյա Ուկրաինայի և Զապորոժյան Սեչի հետ Ղրիմի ունեցած տնտեսական կապերում հայերի խաղացած դերի մասին։ Ղրիմի հայ վաճառականները իրենց ձեռքում էին պահում առևտրի մենաշնորհը։ Չնայած այդ շրջանում տիրող միջազգային բարդ պայմաններին, հայ վաճառականները աշխույժ առևտուր էին անում Ուկրաինայում, Ղրիմում և Ռուսաստանում, դրանով իսկ ազդելով արտաքին քաղաքական հարաբերությունների վրա։

Պլենար նիստի վերջում «Ուկրաինայի և Հայաստանի զավակների համագործակցությունը Հոկտեմբերի հաղթանակի համար մղված մարտերում» թեմայով զեկուցեց պատմական գիտությունների դոկտոր Ա. Ն. Մնացականյանը։ Զեկուցողը նշեց, որ Ռուսաստանում տեղի ունեցած Հոկտեմբերյան հեղափոխությունը, ցարիզմի կողմից ճնշված ազգերի ազատագրման մասին լենինյան դեկրետները, ինչպես նաև Ուկրաինայի և Հայաստանի վերաբերյալ 1917 թ. հռչակված լենինյան ազգային քաղաքականության սկզբունքները դրեցին ազգային հարցի հեղափոխականորեն լուծման հիմքերը։

Հայ և ուկրաինացի ժողովուրդների լայն զանգվածները ոգեշնչվել էին մեծ Հոկտեմբերի ազատատենչ գաղափարներով։ Երկու ժողովուրդների զավակները ակտիվորեն մասնակցում էին Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակի համար մղվող պայքարին։ Ուկրաինայում և Ղրիմում հեղափոխության համար պայքարում էին հայազգի Մ. Տեր-Արծրունյանցը, Պերճ Պողոյանի որդին՝ Պողոշ Պողոյանը, Գասպար Ոսկանյանը և շատ ուրիշներ։ Ուկրաինացիներն իրենց հերթին անձնազոհ կերպով մարտնչեցին թուրքական զավթիչներից Հայաստանն ազատագրելու և երկրում սովետական կարգեր հաստատելու համար։

Պլենար նիստից հետո գիտական նստաշրջանի աշխատանքները շարունակվեցին երեք սեկցիաներում։

Նոր և սովետական շրջանի պատմության սեկցիայում առաջինը զեկուցեց պատմական գիտությունների թեկնածու Վ. Պ. Սիդորենկոն (Կիև)։ Նրա թեման էր՝ «Կիև և Երևան քաղաքների մրցությունը»։ Բազմաթիվ փաստերի վկայակոչմամբ նա ցույց տվեց, որ Ուկրաինայի և Հայաստանի մայրաքաղաքների միջև ծավալված սոցիալիստական մրցությունը ավելի ամրապնդեց երկու քաղաքների աշխատավորության համագործակցությունը, նրանց բոլոր ջանքերը ուղղեց սոցիալիզմի կառուցումն ավարտելու և կոմունիզմի ծավալուն շինարարությանն անցնելու գործին։

Նիստում ընթերցվեց պատմական գիտությունների դոկտոր Խ. Հ. Բարսեղյանի զեկուցումը նվիրված ուկրաինական և հայ ուսանողության հեղափոխական կապերի պատմությանը։ Զեկուցումից պարզվեց, որ Կիևում, Խարկովում, Նիկոլաևում, Օդեսայում և Ուկրաինայի այլ քաղաքների ուսումնական հաստատություններում սովորող հայ հեղափոխական ուսանողները սերտ կապեր էին հաստատել ուկրաինացի մարքսիստ ուսանողների հետ, որը նպաստեց մարքսիստական գաղափարների տարածմանը Հայաստանում։

Այնուհետև կարդացվեցին հետևյալ զեկուցումները. «Լյուդվիգ Կնունյանցի բոլշևիկյան հրապարակախոսությունը «Կիևսկոյե սլովո» պարբերականում 1905 թ.» (պատմ. գիտ. թեկն. Վ. Գ. Սառբեյ, Կիև), «409-րդ Հայկական Կիրովոգրադյան հրաձգային դիվիզիան Ուկրաինայի ազատագրման համար մղված մարտերում, 1943—1944 թթ.» (պատմ. գիտ. թեկն. Ա. Հ. Հարությունյան), «Ուկրաինայի արևմտյան մարզերի ժամանակակից հայ բնակչության կազմի մասին» (տնտ. գիտ. թեկն. Գ. Ի. Կովալչակ, Լվով), «Ուկրաինայի և Հայաստանի գիտական կապերը 1924—1932 թթ.» (պատմ. գիտ. թեկն. Մ. Ֆ. Դմիտրենկո, Կիև), «Ուկրաինական ժողովրդի օգնությունը հայ գաղթականներին 1916—1921 թթ.» (պատմ. գիտ. դոկտ. Ս. Տ. Ալիխանյան) և այլն։

Ֆեոդալական ժամանակաշրջանի պատմության սեկցիայում կարդացվեց 8 զեկուցում։ Արվեստագիտության թեկնածու Մ. Մ. Ղազարյանի զեկուցումը նվիրված էր XVI—XVII դդ. Լվովի

հայ նկարիչների գործունեության պատմությանը։ Մ. Ղազարյանը ցույց տվեց, որ միջնադարյան Լվովի հայկական գեղարվեստը թեև իր գեղարվեստական դեմքով առնչվում է եվրոպական բարոկկոյին և կրում է Լվովի տեղական գեղարվեստի կնիքը, բայցևայնպես նա ունի որոշակի արտահայտված հայկական կոլորիտ։

Ուկրաինական դումաների և հայկական պատմական ողբերի տիպոլոգիական ընդհանրությունների մասին զեկուցեց Ս. Գ. Ամիրյանը։ Զուգահեռներ անցկացնելով դումաների և ողբերի միջև, նա նկատեց, որ դրանք երկուսն էլ ժողովրդական պայքարի բանաստեղծական հուշարձաններ են, որոնք արտահայտվել են ողբերգական ձևերով։

Այդ նույն սեկցիայում կարդացվեցին զեկուցումներ նաև Արևմտյան Ուկրաինայի և Մոլդավիայի տնտեսական կապերի զարգացման գործում (XV—XVII դդ.) մոլդավահայ գաղութների խաղացած դերի (պատմ. գիտ. թեկն. Ե. Մ. Պողդրադսկայա։ Քիշնև), Ուկրաինայի և Լեհաստանի հայ գաղութներում կնոջ իրավական դրության (պատմ. գիտ. թեկն. Վ. Ռ. Գրիգորյան), Լվովի հայ գաղութի XVII դարի երկրորդ կեսի պատմության (պատմ. գիտ. թեկն. Ն. Կ. Կրիվոնոս։ Լվով), Բրոդի քաղաքի հայ գաղութի (պատմ. գիտ. թեկն. Յա. Ս. Մելնիչուկ։ Իվանովո-Ֆրանկովսկ), Թուրք-թաթարական զավթիչների դեմ ուկրաինական ժողովրդի մղած պայքարում հայերի ունեցած վերաբերմունքի (պատմ. գիտ. թեկն. Մ. Լ. Հովհաննիսյան), միջնադարյան հայ-ուկրաինական կապերի պատմական նշանակության (պատմ. գիտ. թեկն. Վ. Կ. Ոսկանյան) մասին։

Պատմագրության, աղբյուրագիտության և բիբլիոգրաֆիայի սեկտորում լսվեցին մի շարք հետաքրքիր զեկուցումներ։ Պատմ. գիտ. դոկտոր Ռ. Ռ. Սիմոնենկոն (Կիև) քննադատեց բուրժուական գաղափարախոսներին այն բանի համար, որ նրանք փորձում են ինչ-որ ստվերոտ կողմեր գտնել ռուս և ՍՍՀՄ մյուս ժողովուրդների փոխհարաբերություններում։ Սակայն անցած 50 տարում, ասաց զեկուցողը, մեր ժողովուրդների ձեռք բերած վիթխարի նվաճումները սնանկացման են դատապարտում բուրժուազիայի ժամանակակից գաղափարախոսների նմանօրինակ փորձերը։

«Թուրք-թաթարական ասպատակությունները Ուկրաինայում XVI—XVIII դարերում ըստ հայկական աղբյուրների»— այսպիսին էր պրոֆ. Ա. Գ. Աբրահամյանի զեկուցման թեման։ Հայկական աղբյուրներից բերված բազմաթիվ փաստերով նա ցույց տվեց թուրք-թաթարական զավթիչների կողմից ուկրաինական ժողովրդի նկատմամբ կիրառված հալածանքի և մասսայական ոչնչացման քաղաքականությունը։

Այս սեկցիայում կարդացված մյուս զեկուցումները նվիրված էին Լվովի XVI—XVII դդ. արխիվային հայկական փաստաթղթերի ֆիլիգրանների նշանակությանը (օ. Յու. Մացյուկ։ Լվով), Գրիգորիոպոլի հայերի և ուկրաինացիների միջև 1793 թ. կնքված պայմանագրին (պատմ. գիտ. թեկն. Ժ. Ա. Անանյան), հայ գրքի տպագրությանը միջնադարյան Լվովում (Ն. Ա. Ոսկանյան և պատմ. գիտ. թեկն. Կ. Ա. Կորկոտյան), հակաունիատական շարժման վերաբերյալ Առաքել Դավրիժեցու հաղորդած տվյալներին (Ռ. Պ. Պինգիրյան) և այլ հարցերի։

Սեկցիաների նիստերից հետո կայացավ եզրափակիչ պլենար նիստը։ Այստեղ հանդես եկած պրոֆ. Մ. Ա. Ռուբաչը (Կիև) խոսեց Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակի համար մղված մարտերում ուկրաինացիների, բելոռուսների, հայերի, վրացիների, լատիշների և մյուս ազգերի ակտիվ մասնակցության մասին։ Հոկտեմբերյան հեղափոխությունը ազատագրեց Ռուսաստանի ճնշված ժողովուրդներին կապիտալիստների և կալվածատերերի լծից, անհրաժեշտ պայմաններ ընձեռեց սովետներն սոցիալիստական պետություն ստեղծելու, սովետական հանրապետությունների արտադրողական ուժերը արագ զարգացնելու, մշակույթի աննախընթաց ծաղկման հասնելու համար։

Հայկ. ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Բ. Կարինյանը իր զեկուցումը նվիրեց Տ. Շևչենկոյի, Ի. Ֆրանկոյի և Կոցյուբինսկու ստեղծագործություններին և դրանց արտացոլմանը հայ գրականության ու հասարակական մտքի մեջ։ XIV—XVI դդ. Ուկրաինայի և Մերձավոր արևելքի հայ գաղութների պատմության աղբյուրների բնութագրման հարցի, կոմունիզմի կառուցման շրջանում հայ և ուկրաինացի ժողովուրդների համագործակցության մասին խոսեցին իրենց զեկուցումներում պատմ. գիտ. թեկնածուներ Յա. Դ. Իսահիչը (Լվով) և Վ. Ֆ. Պանիբուդլասկան։

Վերջում գիտական նստաշրջանի աշխատանքները ամփոփեց Հայկ. ՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի գիրեկտոր, պրոֆ. Գ. Ա. Գալոյանը։

Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ